

ՀՏԴ 037

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ
Ադամյան Ն. Վ.

Ներկայացվող մեթոդական աշխատանքում առաջարկվում են՝

1. հետազոտական աշխատանքի կատարման համար ուսանողին ներկայացվող ընդհանրական պահանջներ,
2. ըստ այդ պահանջների՝ հետազոտական աշխատանքի պլանավորման, իրականացման և աշխատանքի ձևակերպման հմտությունների զարգացմանն օգնող ուսուցման մեթոդիկա:

Բանալի բառեր. ուսանողական հետազոտական աշխատանք, հետազոտական աշխատանքի կատարման, ձևակերպման պահանջներ, հետազոտական հմտությունների զարգացման մեթոդիկա:

Բուհական կրթական առաջին աստիճանում, բակալավրի ուսումնական պլանի համաձայն, հետազոտական են համարվում կուրսային, ավարտական կամ դիպլոմային աշխատանքները, ռեֆերատ անհատական աշխատանքը կամ զեկույցը: Իսկ մագիստրատուրայի աստիճանում ավելանում են գիտահետազոտական աշխատանքն ու պրակտիկան, որն ավարտվում է ավարտական թեզի պաշտպանությամբ: Ուսումնառության ընթացքում այդպիսի աշխատանքների կատարման համար ուսանողին անհրաժեշտ են որոշակի տեսական գիտելիքներ և հետազոտության կատարման, ձևակերպման ու ներկայացման հմտություններ [1]:

Այս աշխատանքով ներկայացնում ենք ուսանողների հետազոտական աշխատանք կատարելու գրագիտության պահանջների ուսուցման և գործնական հմտությունների զարգացման մեթոդիկայի մեր փորձը:

Առաջարկում ենք հաջորդական քայլերի շարք և դրանց ուսուցման մոտեցումներ, որոնց պատշաճ իրականացումը կնպաստի

հետազոտական աշխատանքի կատարման և ձևակերպման դրական արդյունքին:

1. Նոր բան սովորելու, աշխատելու ցանկություն:

Առաջին հայացքից անսովոր թվացող այս պահանջը իրականում աշխատանքի հաջողության լավագույն երաշխիքն է: Քանզի հայտնի ճշմարտություն է և մանկավարժության մեջ անընդհատ ապացուցվող, որ գրեթե անհնար է ինչ-որ բան սովորեցնել մեկին, ով դա չի ցանկանում: Ուստի ղեկավարի կարևոր խնդիրն է հետաքրքրել, շահագրգռել ուսանողին հետազոտական աշխատանք կատարելու համար:

2. Թեմայի ընտրություն:

Թեմա ընտրելիս առաջարկում ենք կողմնորոշվել ղեկավարի կամ հետազոտողի նախասիրություններով, տվյալ կառույցի գիտական ուղղվածությամբ, տվյալ բնագավառի զարգացման հեռանկարներով, մարտահրավերներով, տվյալ բնագավառում դեռևս ուսումնասիրության կարիք ունեցող հարցերով, տվյալ տարածքին բնորոշ խնդիրներով կամ այլ չափանիշներով ու սկզբունքներով:

Թեմայի վերնագիրը անպայման **պետք է մատնանշի հետազոտության կոնկրետ շրջանակը:**

Հետազոտական աշխատանք կատարելու համար անհրաժեշտ պահանջների տեսական ներկայացումից հետո գործնական հմտությունների զարգացման համար կարելի է կազմակերպել ուսուցման հետևյալ քայլերը: Նախապես սովորողներին հանձնարարել ձևակերպել **դասավանդման մեթոդիկայից** (կամ այլ բնագավառից) որևէ հետազոտական աշխատանքի թեմայի վերնագիր և ստորև ներկայացվող 1-7 կետերին վերաբերող բոլոր պահանջները՝ հաջորդ դասին աշխատելու համար: Այնուհետև, ներկայացրած բոլոր քայլերը պետք է քննարկել լսարանում՝ հաշվի առնելով ցուցված պահանջները: Որպես խմբագրման ընդհանուր մոտեցում՝ առաջարկում ենք քննարկել համապատասխան կետի **ցուցումներից շեղումները**՝ սկսելով թեմայի վերնագրից: Յուրաքանչյուրը կներկայացնի իր ձևակերպած տարբերակը, կկազմակերպվի քննարկում, վերնագրի խմբագրում՝ հիմնավորումներով:

Օրինակ՝ ենթադրենք՝ քննարկման է ներկայացվել **«Կենսաբանության դասերի կազմակերպումը ժամանակակից մեթոդներով» թեմայի վերնագիր:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետանկախացման տարիների կրթական բարեփոխումների պահանջներով մանկավարժության մեջ գործածվող «Ժամանակակից մեթոդներ» հասկացությունը հիմնականում վերաբերում է ուսուցման համագործակցային (ինտերակտիվ) մեթոդներին՝ վերնագրի խմբագրման անհրաժեշտությունը կարելի է հիմնավորել նրանով, որ՝

- 1) «Կենսաբանության դասեր» հասկացությունը մեծ ծավալ է ընդգրկում, և դժվար է հիմնավորել այս կամ այն դասի կամ թեմայի ընտրությունը: Դրա համար վերնագիրը պետք է հստակ մատնանշի հետազոտության շրջանակը:
- 2) Ոչ մի մեթոդ չունի վաղեմության ժամկետ, և այսօր օգտագործվող ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային մեթոդները ժամանակակից են, և ավելին, գրեթե ոչ մի համագործակցային մեթոդ չի ծնվել այսօր, բացի համակարգչի և այլ ժամանակակից տեխնիկական սարքերի օգտագործումով մեթոդներից: Այսօր ընդամենը մեթոդներին տրվել են անվանումներ, ինչը պարզապես հեշտացնում է բոլորի կողմից դրանց ճանաչումն ու օգտագործումը, բայց չի փոխում էությունը, հետևաբար չի կարող ժխտել ավանդական ուսուցման մեջ նույն նպատակներով կիրառության հնարավորությունները:

Արդյունքում, վերնագիրը կարելի է վերաձևակերպել, օրինակ, հետևյալ կերպ՝ **«Կենսաբանության «X» թեմայի ուսուցումը համագործակցային մեթոդներով (կամ մեկ այլ սկզբունքով)»:**

3. Նպատակների ձևակերպում:

Նպատակների ձևակերպումը պետք է համապատասխանի վերնագրին, ուստի առավել հաջողված կլինի այն վերնագիրը, որը կպարունակի նպատակը հուշող որևէ դոմինանտ բառ:

Նպատակները պետք է **հիմնավորեն**, թե **ինչո՞ւ է** պետք այդ աշխատանքը կատարել, **լինեն** հետազոտողի հնարավորություններին ու պաշարներին (ռեսուրսներին) համապատասխան, **մատնանշեն** հետազոտության իրականացման քայլերի ուղղվածությունը, ակնկալվող վերջնարդյունքները:

Մեկից ավելի նպատակների դեպքում դրանք պետք է լինեն կառուցողական, օրգանապես կապված, բխեն մեկը մյուսից, շարունակեն, լրացնեն միմյանց և ամբողջացնեն նպատակը:

Նպատակները ձևակերպելիս ցանկալի է ցույց տալ հետևյալ (կամ՝ նմանատիպ) գործողությունները՝

- խթանել, սովորեցնել, բարելավել, աջակցել, լրացնել, ավելացնել, զարգացնել, որակը բարձրացնել,

- ուժեղացնել, միավորել, համախմբել, համակարգել, կապակցել, կատարելագործել,

- վավերացնել, հավատարմագրել, սահմանել ռազմավարություն, նախանշել հետագա անելիքները, կանխատեսել զարգացման ուղղություններ և այլն...[5]:

Ենթադրենք՝ առաջարկվել կամ խմբագրվել է **«Համագործակցային դասը որպես արդյունավետ ուսուցման միջոց»** վերնագրով թեման: Այդ թեմայով հետազոտական աշխատանք կատարելու նպատակները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

1. *Զարգացնել ուսանողների (կամ այլ թիրախային խմբի՝ դասախոսների, ուսուցիչների ...) համագործակցային դասեր պլանավորելու և կազմակերպելու հմտությունները:*

2. *Կատարելագործել ուսանողի կողմից ուսուցման համագործակցային մեթոդների կիրառական հմտությունները:*

3. *Բարձրացնել ուսուցման և ուսումնառության որակը և այլն:*

Մերժման են արժանի հետևյալ կամ նմանատիպ այլ ձևակերպումները, որոնց հանդիպել ենք տարբեր սկզբնաղբյուրներում: Օրինակ՝

1. *Ուսումնասիրել համագործակցային մեթոդները:*

Մերժումը կարելի է հիմնավորել նրանով, որ ձևակերպածը խնդիր է, ոչ թե նպատակ: Բացի այդ, զարգացման ոչ մի ակնկալվող վերջնարդյունք չի մատնանշում: Կամ՝

2. *Մշակել «X» թեմայի ուսումնասիրության գործընթացը:*

Այս ձևակերպումը մերժելի է առաջին հերթին անտրամաբանական լինելու համար: Բացի այդ, դժվար է պատկերացնել ուսումնասիրության աշխարհագրությունը. որտե՞ղ, ու՞մ կողմից կատարվող ուսումնասիրությանը պետք է վերաբերի հետազոտությունը և այլն:

4. Խնդիրների ձևակերպում:

Ըստ էության՝ խնդիրների ձևակերպումը «սցենար» է, որտեղ բոլոր «կադրերը» պատճառահետևանքային կապերով կապված են միմյանց և ունեն նույն ուղղվածությունը, տանում են դեպի նույն նպատակակետը: Խնդիրներն այն **կոնկրետ, չափելի, հասանելի, իրատեսական, ընդհանուր նպատակին համապատասխանող և որոշակի իրականացման ժամկետ ենթադրող** քայլերն են, որոնք պետք է

հիմնավոր պատասխանեն այն հարցերին, թե **ի՞նչ** հաջորդական քայլերով և **ինչպե՞ս է** պետք իրականացնել աշխատանքը:

Խնդիրները ձևակերպելիս նպատակահարմար է օգտագործել հետևյալ (կամ նմանատիպ) բայերը՝

- սահմանել, ուսումնասիրել, ծրագրել, նախապատրաստել, ստեղծել, մշակել,

- կիրառել, անցկացնել, փորձարկել, կազմակերպել, ընդգրկել,

- բացահայտել, հաստատել, վերլուծել, գնահատել, առաջարկել,

ներկայացնել և այլն [5]:

Նախորդ 3-րդ կետի օրինակում բերված **«Զարգացնել ուսանողների (կամ այլ թիրախային խմբերի՝ դասախոսների, ուսուցիչների ...) համագործակցային դասեր պլանավորելու և կազմակերպելու հմտությունները»** 1-ին նպատակի իրագործման համար տրամաբանական հաջորդականությամբ կապված խնդիրները կարելի է ներկայացնել հետևյալ ձևակերպումներով՝

1) *Ուսումնասիրել համագործակցային դասեր պլանավորելու մեթոդական սկզբունքները:*

2) *Ուսումնասիրել սկզբնաղբյուրներից վերցրած համագործակցային դասերի պլաններ:*

3) *Ստեղծել որևէ թեմայի ուսուցման համագործակցային դասի պլան:*

4) *Կազմակերպել այդ պլանով դասեր՝ մանկավարժական պրակտիկայի կամ համապատասխան դասընթացի գործնական դասերի ժամանակ:*

5) *Անցկացնել քննարկումներ դասի մասնակից աշակերտների, ուսանողների կամ դասալսողների հետ:*

6) *Բացահայտել դասի պլանի հաջողված և չհաջողված կողմերը:*

7) *Կատարելագործել դասի պլանը:*

8) *Ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:*

5. Մեթոդաբանություն:

Հետազոտության մեթոդաբանությունը ձևավորվում է նպատակների ու խնդիրների խառնուրդից: Դրա ձևակերպումը պետք է բավարարի **ինչի՞ միջոցով, ի՞նչ ստանալ** սկզբունքին:

3-րդ կետի օրինակում բերված **«Զարգացնել ուսանողների (կամ այլ թիրախային խմբի՝ դասախոսների, ուսուցիչների ...) համագործակցային դասեր պլանավորելու և կազմակերպելու հմտությունները»** 1-ին նպատակի իրագործման մեթոդական մոտեցումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

Համագործակցային դասի պլաններ կազմելու, դրանցով դասեր կազմակերպելու, դասալսողների և մասնակիցների հետ քննարկումների միջոցով կատարելագործել դասի պլանը և զարգացնել համագործակցային դասեր կազմակերպելու հմտությունները:

Մեր պրակտիկայում հաճախ հանդիպում ենք նմանատիպ ձևակերպումների՝

- *կազմել դասի պլաններ,*
- *կազմակերպել դասեր,*
- *կատարել վերլուծություններ,*
- *և այլն:*

Այսպիսի ձևակերպումները մերժելի են, քանի որ չեն արտահայտում միջոցի և վերջնարդյունքի կապը, համապատասխանությունը: Իրականում, դրանք միայն միջոցները բացահայտող, խնդիրները մատնանշող ձևակերպումներ են և չեն ուղղորդում դեպի նպատակի իրականացում:

6. Աշխատանքի բովանդակություն:

Ի տարբերություն իրականության մեջ առավել ընդունված այն մոտեցման, որ բովանդակությունը կարելի է ձևակերպել աշխատանքի ավարտից հետո, մենք գտնում ենք, որ աշխատանքի հաջող իրականացման համար անհրաժեշտ է սկսելուց առաջ հստակ պատկերացնել բոլոր քայլերը, հետևաբար, նախնական բովանդակությունը ձևակերպել սկզբում: Ինչը նշանակում է, որ աշխատանքի ընթացքը կարող է առաջադրել բովանդակության վերանայման և խմբագրման անհրաժեշտություն:

Ձևակերպած հետազոտական աշխատանքի բովանդակությունը պետք է ընդգրկի գործատուի կանոնակարգով պահանջվող բոլոր կառուցվածքային մասերի անվանումները և աշխատանքի մեջ դրանց համապատասխանող էջերը: Օրինակ.

Ներածություն (էջի մատնանշումով).....

Այստեղ կարող են ներկայացվել թեմայի մասին ընդհանրական տեղեկություններ կամ գործատուի կանոնակարգային պահանջները: Օրինակ՝ թեմայի ընտրության կամ արդիականության հիմնավորումը, հետազոտության իրականացման նպատակները, խնդիրները, մեթոդաբանությունը կամ դրանցից մի քանիսը և այլն:

Հիմնական մաս

Տարբեր գործատուներ այս մասը կարող են տարբեր կերպ անվանել. օրինակ՝ «Գրական ակնարկ» և այլն: Այս մասն իր մեջ

ընդգրկում է գլուխները: Յուրաքանչյուր գլուխ և դրա ենթագլուխները անպայման պետք է ունենան վերնագրեր, որոնք պետք է տրամաբանորեն կապակցված լինեն և միասին ամբողջացնեն գլխի նպատակները: Օրինակ.

Գլուխ 1. Համագործակցային ուսուցում

Մինչև ենթագլուխների շարադրումը գլուխ(ներ)ը կարող է ներկայացնել վերնագրի էությունը և ենթագլուխները միավորող տրամաբանությունը բացահայտող որոշակի տեղեկություն: Այդ դեպքում *առաջարկում ենք գլխի էջը մատնանշել*, մնացած դեպքերում կարելի է էջակալել միայն ենթագլուխները:

Ենթագլուխները պետք է համարակալվեն գլխին համապատասխանող հաջորդական կրկնակի ենթահամարներով, ներկայացվեն վերնագրերը և մատնանշվեն էջերը:

- 1.1. Համագործակցային ուսուցման առավելությունները.....
- 1.2. Համագործակցային ուսուցման պատմությունը.....
- 1.3. և այլն

Գլուխ 2. Համագործակցային դասի պլանավորում

2.1. Համագործակցային դասի պլաններ կազմելու սկզբունքներ.....

2.2. Սկզբնաղբյուրներից վերցված համագործակցային դասի պլանների նմուշներ.....

2.3. և այլն

Այս գլուխը կարող է լինել նաև առաջինի ենթագլուխներ:

Գլուխ 3. Մեփական հետազոտություններ (և մեթոդիկա) և արդյունքների վերլուծություն

Կախված թեմայից՝ այս գլուխը ևս կարող է ունենալ ենթագլուխներ:

3.1. Որևէ թեմայի ուսուցման (նշել վերնագիրը) մեր կողմից ստեղծված համագործակցային դասի պլան.....

3.2. Համագործակցային դասի (նշել վերնագիրը) կազմակերպման առաջադրանքներ.....

3.2 *ենթագլխի շարադրանքում ցանկալի է նշել առաջադրանքները՝ ըստ դասի պլանի քայլերի ու նպատակների:*

3.3. Դասի քննարկման վերլուծություն.....

3.3. *Ենթագլխի շարադրանքում կարելի է ներկայացնել քննարկման մասնակիցների բանավոր կարծիքները կամ դասալսման արձանագրությունները, առաջարկությունները և ձևակերպել*

եզրակացություններ դասի պլանի և կազմակերպված դասի առավելությունների ու թերությունների, հետագա շտկումների մասին:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ըստ հետազոտողին ներկայացված կանոնակարգային պահանջների՝ «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժինը կարող է լինել միավորված կամ առանձին-առանձին:

Եզրակացությունները պետք է վերլուծական դիտարկումներ պարունակեն աշխատանքի արդյունքների մասին: **Իսկ առաջարկությունները** պետք է մատնանշեն նմանատիպ աշխատանքների բարելավման կամ սխալները վերացնելու այլընտրանքային ուղիներ:

Որպես **սկզբունքային մոտեցում՝** առաջարկում ենք եզրակացությունները ձևակերպել՝ ելնելով նպատակներից և խնդիրներից: *Եզրակացությունը պետք է տեղեկություն տա նպատակի կամ խնդրի (դրանցից յուրաքանչյուրի) իրականացման արդյունքի մասին և պարունակի վերլուծական խոսք այդ արդյունքի հիմնավորման մասին (ինչո՞ւ այդպես ստացվեց, համապատասխանո՞ւմ էր արդյոք արդյունքը ակնկալիքին կամ ի՞նչը ապահովեց արդյունքի համապատասխանությունը ակնկալիքին, ո՞րն էր անհամապատասխանության պատճառը և այլն):*

Որևէ նպատակի կամ խնդրի չիրականացման դեպքում եզրակացության մեջ պետք է նշվի նման արդյունքի պատճառների մասին (օրինակ՝ մեթոդի անհամապատասխանության, ժամանակի անիրատեսության, հիմնական նպատակի կամ խնդրի հետ ուղղակի կապ չունենալու, անկախ հետազոտության նպատակ կամ խնդիր լինելու և այլ պատճառներ) և հնարավորության դեպքում առաջարկվի այլընտրանք [4]:

Ելնելով արդյունքների վերլուծական գնահատականից և եզրակացություններից՝ կարելի է ձևակերպել նաև առաջարկություններ:

Օրինակ. 3-րդ կետի օրինակում բերված **«Զարգացնել ուսանողների (կամ այլ թիրախային խմբի՝ դասախոսների, ուսուցիչների ...)** համագործակցային դասեր պլանավորելու և կազմակերպելու հմտությունները» 1-ին նպատակի վերաբերյալ եզրակացությունները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

1. Ուսանողների կողմից համագործակցային դասեր պլանավորելու և կազմակերպելու դժվարությունները պայմանավորված են բուհական համապատասխան դասընթացների ծրագրերում թեմային հատկացված

գործնական ժամերի պակասով կամ տեսական նյութի անբավարար մակարդակով, կամ այլ...:

Իսկ այդ կետի եզրակացությանը համապատասխանող առաջարկությունը կարող է ձևակերպվել հետևյալ կերպ.

1.1 Վերանայել ուսումնական ծրագրերը, ուսուցանվող տեսական գիտելիքների պահանջները բարելավել, համապատասխանեցնել չափորոշչային պահանջներին, ավելացնել թեմայի ուսումնասիրման համար նախատեսված գործնական դասերը, կամ այլ... :

2. Ուսուցիչների կամ դասախոսների կողմից համագործակցային դասեր պլանավորելու և կազմակերպելու հմտությունների անբավարարությունը պայմանավորված է տեսական անբավարար գիտելիքների իմացության կամ պրակտիկայում քիչ կիրառելու հնարավորությամբ:

Բերված եզրակացությանը համապատասխանող առաջարկություն(ներ)ը կարող են ձևակերպվել հետևյալ կերպ.

2.1. Անհրաժեշտ է մշտադիտարկումների միջոցով բացահայտել ուսուցիչների խնդիրները և հաճախակի դասալսումների, վարպետության դասերի, սեմինարների կազմակերպման միջոցով տրամադրել մեթոդական աջակցություն:

2.2. Անհրաժեշտ է կազմակերպել մանկավարժական կադրեր պատրաստող բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի շարունակական թեմատիկ վերապատրաստումներ՝ հանրակրթական բարեփոխումների պահանջները ուսուցանելու, մանկավարժական-մեթոդական հմտությունները կատարելագործելու նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

Գրականության ցանկը լրացվում է դարձյալ ըստ գործատուի կողմից հետազոտողին տրամադրված կանոնակարգի:

Աշխատանքի կատարման ընթացիկ փուլերում, որպես օգտագործած սկզբնաղբյուրները հավաքագրելու ձև, **առաջարկում ենք՝**

1) Յուրաքանչյուր հղման կողքին փակագծում նշել տվյալ սկզբնաղբյուրի մասին բոլոր կանոնակարգային պահանջները: Իսկ աշխատանքի ավարտուն ձևակերպման փուլում դրանք տեղափոխել «գրականության ցանկ» բաժին, դասավորել ըստ կանոնակարգային պահանջի: Յուրաքանչյուր սկզբնաղբյուրի համապատասխան հերթական համարը տեղափոխել աշխատանքային էջերի հղման տեղ և արդեն ազատվել չպահանջված տեղեկությունից:

2) Իսկ համացանցի տեղեկության հավաստիության համար սկզբնաղբյուրը հղելուց հետո **նշել** դրա հասանելիության ժամկետը:

Օրինակ՝ <https://arinj.schoolsite.am/ուսումնական/մեթոդական-գեկուցումներ/> - հասանելի է 01.02.2019

7. Աշխատանքի հանրային ներկայացում (պրեզենտացիա)

Հետազոտական բնույթի շատ աշխատանքների կատարումից ու ձևակերպումից բացի կարևոր փուլ է աշխատանքի հանրային ներկայացումը (նախապաշտպանություն, պաշտպանություն, զեկուցում գիտաժողովին և այլն), որը պատկերացումներ է ձևավորում ոչ միայն կատարված աշխատանքի, այլև հետազոտողի տարբեր որակների ու ցուցանիշների մասին: Ներկայացման պատրաստ է համարվում ամբողջապես ձևակերպված աշխատանքը: Այն պարտադիր պետք է ունենա **Տիտղոսաթերթ**, որի ձևակերպման տեխնիկական պահանջները ևս տրամադրում է գործատուն՝ մնացած բոլոր կանոնակարգային պահանջների հետ միասին:

Ներկայացման համար հետազոտողը կարող է պաստառներ, աղյուսակներ ու գրաֆիկներ ստեղծել կամ ներկայացնել սահկահանդես: Վերջինիս ձևավորման գեղագիտական կողմը թողնելով անհատի ճաշակին՝ կարելի է **առաջարկել** հետազոտական աշխատանքի ներկայացման սահկահանդեսի ստեղծման մի քանի **ցանկալի պահանջներ**: Օրինակ՝

1. բոլոր սահկասալիկները ունենան թեմայի և տվյալ տեղեկությանը համապատասխանող վերնագրեր, որ նրանցում տեղեկույթը ներկայացվի հակիրճ, սխեմատիկ, առանց պատմողական նախադասությունների:
Հաջորդաբար ներկայացվեն՝
2. աշխատանքի վերնագիրը, կատարման վայրը, կամ գործատուի անունը, կատարողի և ղեկավարողի անուն-ազգանունները, կատարման տարեթիվը,
3. հետազոտության նպատակները, խնդիրներն ու մեթոդաբանությունը,
4. աշխատանքի կառուցվածքը,
5. կառուցվածքային մասերը հակիրճ ներկայացնող և որոշ պարզաբանումներ տվող ցուցադրումներ,
6. սեփական հետազոտության արդյունքները և դրանց գնահատման վերլուծությունը,
7. եզրակացություններն ու առաջարկությունները:

Իսկ աշխատանքի վերջնական գնահատման հուսալիության և օբյեկտիվության համար առաջարկում ենք նախօրոք մշակել գնահատման չափանիշներ և սանդղակային պահանջներ, ինչը ևս ցանկալի է հետազոտողին տրամադրել կանոնակարգային մյուս պահանջների հետ միասին: Որպես չափանիշներ՝ կարող են լինել, օրինակ՝

✓ 2-6-րդ կետերի, ինչպես նաև աշխատանքի ձևակերպման տեխնիկական պահանջների ու լեզվական գրագիտության ապահովումով աշխատանքի և սահկահանդեսի ներկայացումը,

✓ ազատ, անկաշկանդ զեկուցումը,

✓ նյութին տիրապետելու աստիճանը,

✓ ինքնուրույնության և վերլուծական ընդունակության աստիճանը,

✓ լսարանի հետ հաղորդակցվելու, աշխատանքին վերաբերող հարցերին տրվող պատասխանների որակը և այլն [2]:

Որպես մեր աշխատանքի ամփոփում՝ լիահույս ենք, որ մատնանշված ցուցումներով և անհրաժեշտ քանակությամբ գործնական դասեր կազմակերպելուց հետո լսարանի շահառուները կձևավորեն պատասխանատվություն ցանկացած աշխատանքի կատարման ժամանակ կանոնակարգային պահանջները հարգելու նկատմամբ, կունենան բավարար տեսական ու գործնական գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ և ջանադրաբար աշխատելու, փորձառության ավելացման արդյունքում կունենան հաջողություն ու որակյալ վերջնական աշխատանք:

Իսկ բուհը անպայմանորեն կարձանագրի ուսուցման և ուսումնառության որակի բարձրացում:

ОСНОВНЫЕ ТРЕБОВАНИЯ И МЕТОДИКА ОБУЧЕНИЯ НАВЫКАМ ВЫПОЛНЕНИЯ ИССЛЕДОВАТЕЛЬСКОЙ РАБОТЫ

Адамян Н. В.

В представленной методической работе предлагаются:

1. общие требования к исследовательской работе студентов;

2. методика обучения планирования, выполнения и оформления исследовательской работы согласно этим требованиям.

Ключевые слова: студенческая исследовательская работа, требования исполнения и оформления исследовательской работы, методика развития исследовательских навыков.

BASIC REQUIREMENTS AND METHODS OF TEACHING SKILLS TO PERFORM RESEARCH WORK

Adamyán N. V.

The present methodical work suggests:

1. General requirements for research work of students;
2. Methods of training planning, execution and registration of research work according to those requirements.

Keywords: student research work, requirements of execution and registration of research work, methods of development of research skills.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադամյան Ն. Ուսանողների հետազոտական աշխատանք կատարելու պատրաստվածության աստիճանի և գնահատման մեթոդիկայի մի փորձ // ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր»: 2013: N 2: Պրակ Բ: էջ 99-112:
2. Ադամյան Ն. Դասավանդման մեթոդիկայի արդի պահանջներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ: «Էդիթ Պրինտ»: Երևան: 2018: 264 էջ:
3. Գիտահետազոտական հմտություններ: Ուսումնամեթոդական ուղեցույց (աշխատանքների համակարգող Դեմիրճյան Գագիկ) // Գյումրի: «Էլդորադո» հրատ.: 2013: 151 էջ:
4. Կրթական քաղաքացիական նախաձեռնություն: Փոքր դրամաշնորհների մրցույթի վերլուծական փաստաթղթի կառուցվածք // Krtakan2017@gmail.com- hussan@tj է 20.11.2018
5. <https://www.youtube.com/watch?v=edT-2qhyGk8>–Մուրադյան Վահրամ: Դրամաշնորհային ծրագրի առաջարկ գրելու հիմնական փուլերն ու առանձնահատկությունները:
6. shsu am/internal_legal_acts – ՇՊՀ մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ // Հաստատված է ՇՊՀ «Հիմնադրամի» գիտխորհրդի 28.12.2017թ. նիստում:

Տեղեկություններ հեղինակի մասին

Ադամյան Ն. Վ. – կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ nelliadamyán60@gmail.com

Տրվել է խմբագրություն 10.10.2019